

## Առաջարկներ Ներկայացնելու Հրավեր (ԱՆՀ)

### Հայաստանի Հանրապետություն

### ՀՀ ԱՆ «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ

**Պայմանագրի անվանումը- Մարտունու բժշկական կենտրոնում հեմոդիալիզի ծառայություններ իրականացնելու համար անհրաժեշտ բժշկական սարքավորումների ձեռքբերում**

**Մրցույթ թիվ- CR4/NCB/B-G/020-19**

1. Հայաստանի Հանրապետությունը, Ֆինանսավորում է ստացել ՀԲ-ից, «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» ծրագիրն իրականացնելու նպատակով, որի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել բժշկական սարքավորումներ՝ Մարտունու ԲԿ-ում հեմոդիալիզի ծառայություններ իրականացնելու համար:

Հայտերը կարող են ներկայացվել մեկ կամ մի քանի պայմանագրերի համար, ինչպես նշված է մրցութային փաստաթղթերում: Հայտատուները կարող են առաջարկել գեղչեր մի քանի պայմանագիր շնորհվելու պայմանով. գեղչերի մասին պետք է նշված լինի մրցութային առաջարկի նամակում:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը հրավիրում է մրցույթի իրավասու մասնակիցներին մրցութային առաջարկներ ներկայացնել հետևյալ ապրանքները մատակարարելու համար՝ *Լոտ 1 - Հեմոդիալիզի սարքի (5 հատ) և Ջրի մաքրման կայանի (1 հատ) ձեռք բերում #CR4/NCB/B-G/020/1-19; Լոտ 2 - Հեմոդիալիզի բազկաթոռների (5 հատ) ձեռք բերում #CR4/NCB/B-G/020/2-19; Լոտ 3 - Բիկարթոնատրային խառնիչի (1 հատ) ձեռք բերում #CR4/NCB/B-G/020/3-19:*

3. Մրցույթն իրականացվելու է «Ազգային մրցակցային գնման» (NCB) ընթացակարգին համապատասխան, ինչն ամրագրված է Համաշխարհային բանկի «ՎՋՄԲ վարկային և ՄՋԸ փոխառությունների շրջանակներում գնումների ուղեցույցով» (Հունվար 2011, վերանայված Հուլիս 2014): Մրցույթը բաց է բոլոր հայտատուների համար՝ Համաշխարհային բանկի համար ընդունելի երկրներից, ինչպես ամրագրված է վերոնշյալ ուղեցույցում: Ի լրումն վերոնշյալի, խնդրում ենք

ուշադրություն դարձնել 1.6 և 1.7 կետերի վրա, որով սահմանվում են Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման մասով:

4. Մրցույթային փաստաթղթերի ամբողջական փաթեթը՝ հայերեն լեզվով, հասանելի է էլ-գնումների համակարգում՝ [www.armeps.am](http://www.armeps.am) և [www.gnumner.am](http://www.gnumner.am) կայքում (Գնումների հայտարարություններ-> Ծրագրի իրականացման գրասենյակների կողմից կատարվող գնումների մասին հայտարարություններ և հրավերներ): Այնուամենայնիվ, «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ պատասխանատու չէ վերոնշյալ կայքից սխալ կամ ոչ ամբողջական բեռնման, ինչպես նաև հետագայում մրցույթային փաստաթղթերի փոփոխությունների առկայության դեպքում դրանց բացթողման համար: Էլ-գնումների համակարգում համապատասխան CPV կոդով գրանցված կազմակերպությունները կստանան սույն հրավերը ավտոմատ ծանուցման միջոցով: Ցանկացած կազմակերպություն կարող է գրանցվել էլ-գնումների համակարգում, օգտագործելով հետևյալ հղումը <https://armeps.am/epps/home.do>

6. Հայտերը պետք է ներկայացվեն միայն էլեկտրոնային եղանակով՝ էլեկտրոնային գնումների Armeps ([www.armeps.am](http://www.armeps.am) կայք) համակարգի միջոցով ամենաուշը 2019թ-ի հունիսի 27-ին, ժամը 15:00-ին: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը չեն ընդունվում Համակարգի կողմից:

7. Բոլոր հայտերը պետք է ուղեկցվեն «Հայտի ապահովման հայտարարագրով»:

*«Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ*

*Ում: Կրկին Քրիստինե Սարգսյանին, Տնօրեն պաշտոնակատար*

*Պրն. Հովակիմ Պողոսյան, գնումների մասնագետ*

*ՀՀ, ք. Երևան 0051, Կոմիտասի 49/4, 5-րդ հարկ*

*Հեռ.՝ (+374 10) 29 75 36, (+374 10) 29 75 37*

*Կայք: [www.healthpiu.am](http://www.healthpiu.am); [procurement@healthpiu.am](mailto:procurement@healthpiu.am)*